

Տարիել Բարսեղյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՆԱԳՐՔԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

1998թ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական նոր օրենսգրքի ընդունումը կենսական անհրաժեշտություն էր, քանի որ խորհրդային կացութաձևի պահանջները սպասարկող 1964թ. ընդունված Հայաստանի Խորհրդային Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, որը սպասարկում էր խորհրդային կացութաձևի պահանջները, չէր համապատասխանում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման պահանջներին, տնտեսական, սոցիալական, քաղաքական իրողություններին: Քաղաքակիրթ շուկայի կայացման և տնտեսական նոր հարաբերությունների ձրավորման պայմաններում անհրաժեշտ էր մշակել քաղաքացիաիրավական հարաբերությունները նորովի կանոնակարգող քաղաքացիական օրենսգիրք: Իհարկե, շտապողականություն դեպքում պարագայում միանգամայն հնարավոր էր մշակել և ընդունել ավելի կատարյալ օրենսգիրք, բայց օրենսգրքի շուտափույթ ընդունումը հավանաբար խիստ անհրաժեշտ էր, ինչի պատճառով էլ, հաշվի չնստելով ոլորտ մասնագետների հետ, գործողության մեջ դրվեց բազում սխալներ պարունակող, անկատար օրենսգիրք, որի նորմերի մի մասը հայերեն և ռուսերեն լեզվով տարբերակներում պարունակում են բովանդակային տարբերություններ:

Պատահական չէ, որ 2010թ. մարտի 23-ի դրությամբ ՀՀ քաղ. օր.-ում կատարվել է 264 փոփոխություն, բայց արդյունքում օրենսգրքի որակը գրեթե չի փոխվել: Ընդ որում՝ լրացումների և փոփոխությունների գործնաբար դեռ շարունակվում է, բայց քանի որ դրանք կատարվում են պահի թելադրանքով, տարերայնորեն, կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով, գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների բնականոն կարգավորման հայեցակարգի բացակայության պայմաններում, դրանք ոչ միայն չեն շտկում վիճակը, այլև ընդհակառակը, ավելացնում են հա-

կասություններն ու թերությունները:

Փոփոխություններ կատարելիս, մեր կարծիքով, հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ քաղ. օր.-ը, ի տարբերություն այլ օրենսգրքերի, ընդհանրական կարգավորում իրականացնող կողմից կացված իրավական ակտ է, որի նորմերը հիմք են ծառայում տարբեր ինստիտուտները կարգավորող լոկալ իրավական ակտերի ստեղծման, տարաբնույթ հարաբերությունների կարգավորման միատեսակությունն ու միասնականությունն ապահովելու համար: Այլ խոսքով՝ քաղ. օր.-ը, լինելով հասարակական հարաբերությունների կարգավորիչ, միաժամանակ նաև ուղեցույց է, հարաբերությունների առավել մանրամասն կարգավորող ակտերը ընդունելու, շուկայական հարաբերությունների բնականոն զարգացումն ապահովող իրավական բազայի ստեղծման գործում: Այդ օրենսգիրքն է կոչված ապահովելու գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների միատեսակ և միասնական կարգավորումը՝ անկախ նրանից, թե ինչպիսի օրենսդրական կամ ենթօրենսդրական ակտով են կարգավորվում այդ հարաբերությունները:

Ասվածից հետևում է, որ ՀՀ քաղ. օր.-ը շուկայական հարաբերությունների կարգավորման հիմքն է և պետք է ապահովի այդ բնագավառում ընթացիկ օրենսդրության զարգացումը: Սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես ցույց տվեց կիրառման տասներեքամյա փորձը, աչքի է ընկնում խիստ ցածր արդյունավետությամբ և բացթողումների, սխալների, ոչ ճիշտ ձևակերպումների, այլ թերությունների, շուկայական հարաբերությունների կառուցակարգերի խեղաթյուրման հետևանքով, ի գորու չէ իրականացնելու այդ առաքելությունը: Այդ պատճառով էլ ՀՀ քաղ. օր.-ի կատարելագործման արդիականությունը կասկած չի հարուցում: Հարցն այն է, թե կատարելագործման որ ուղին է ավելի նպատակահարմար՝ մշակել և ընդունել նոր քաղաքացիական օրենսգրհի՞րք, թե՞ շարունակել փոփոխությունների և լրացումների միջոցով գործող օրենսգրքի կատարելագործումը:

Մեր կարծիքով առավել ճիշտ և արդյունավետ ուղին նոր օրենսգրքի մշակումն է, քանի որ գոյություն ունեցող իրողությունները, օրենսգրքի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան ցույց են տալիս, որ լրացումներով և փոփոխություններով գործող օրենսգիրքը շտկել հնարավոր չէ: Բացի այդ, երկրում տեղի են ունեցել սոցիալական և տնտեսական լուրջ փոփոխություններ, և գործող

օրենսգիրքը այլևս չի կարող բավարարել սոցիալական պետության և զարգացած շուկայական տնտեսության պահանջները:

Եթե դասակարգելու լինենք ՀՀ քաղ. օր.-ի թերությունները, ապա դրանք կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝

- ա. կառուցվածքային սխալներ,
- բ. կարգավորման սխալներ և հակասություններ,
- գ. բացեր, անկատար իրավական ինստիտուտներ,
- դ. եզրութաբանական անճշտություններ և հակասություններ,
- ե. այլ բնույթի սխալներ:

Ա. Կառուցվածքային սխալներ: ՀՀ քաղ. օր.-ի համակարգը խեղձված է: Այդ օրենսգիրքը կազմված է օրենսդրության կողիֆիկացման կանոնների անտեսմամբ և իրենից ներկայացնում է առանձին նորմերի, ինստիտուտների չփոխկապակցված, տրամաբանական հաջորդականությունից զուրկ հավաքածո: Թերևս դա Հայաստանի Հանրապետությունում գործող միակ, այսպես կոչված, «կողիֆիկացված ակտն» է, որը չի համապատասխանում կողիֆիկացման ոչ ինստիտուցիոն, ոչ էլ պանդեկտ համակարգի պահանջներին:

Այն դեպքում, երբ Հանրապետության գործող բոլոր օրենսգրքերը կառուցված են պանդեկտ համակարգին համապատասխան. ուեն ընդհանուր և հատուկ մասեր, ՀՀ քաղ. օր.-ը չունի ընդհանուր մաս: Օրենսգրքի այդ մասը աղճատվել է:

ՀՀ քաղ. օր.-ի «Ընդհանուր դրույթները» պարունակում են ընդհանենը երեք գլուխ՝

Գլուխ 1. Քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ ակտերը:

Գլուխ 2. Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը: Քաղաքացիական իրավունքների իրականացումը:

Գլուխ 3. Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը:

Դրանով ընդհանուր դրույթները կամ, այսպես կոչված, ընդհանուր մասն ավարտվում է: Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները և օբյեկտները, որոնց մասին օրենսգրքի 1-ին հոդվածը առանձնահատուկ հիշատակում է, դուրս են բերվել ընդհանուր դրույթներից, իսկ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման համար ընդհանեական նշանակություն ունեցող ընդհանուր մասի մնացած ինստիտուտները՝ «Գործարքներ», «Ներկայացուցչություն», «Ժամկետներ», «Հայցային վաղեմություն» տեղափոխվել են

«Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ»՝ բաժնից հետո, և տպավորություն է ստեղծվում, որ դրանք վերաբերում են ոչ թե քաղաքացիական բոլոր իրավահարաբերություններին, այլ միայն սեփականության իրավունքին: Ասվածին պետք է հավելել նաև այն, որ «Գրավի իրավունք» գլուխը կամայականորեն անջատվել է «Պարտավորությունների կատարման ապահովումը» գլխից և որպես առանձին գլուխ՝ զետեղվել է «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ» բաժնում, իսկ «Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագիրը՝ «Ծառայություններ մատուցելու պայմանագրեր» ենթաբաժնում: Ի դեպ, «Պայմանագրերից բխող պարտավորություններ» բաժինը ենթաբաժինների բաժանելը նույնպես սխալ է: «Մտավոր սեփականության իրավունք» բաժնում ևս նախատեսվում են պարտավորություններ, որոնք ոչ մի կերպ չեն կարող ընդգրկվել այդ ենթաբաժիններում: Կարծում ենք, որ ՀՀ քաղ. օր.-ում տիրող համակարգային քաոսը վերացնելու անհրաժեշտությունը այլ հիմնավորման կարիք չունի:

Անհրաժեշտ չենք համարում և իրավակիրառ և իրավաստեղծ գործունեության համար քաղաքացիական օրենսգրքի համակարգի նշանակությունը: Բավարարվենք միայն համաշխարհային հեղինակություն վայելող երկու գիտնականների կարծիքները մեջ բերելով:

Պրոֆեսոր Ե.Ա. Սուխանովը գրում է. «Օրենսգրքի առանձնահատկությունը որոշակի համակարգով կառուցված լինելու մեջ է, որում անպայմանորեն առանձնացվում են ընդհանուր դրույթները (ընդհանուր մասը) և ընդգրկվում են համապատասխան բնագավառի հիմնական կանոնները, որն էլ կանխորոշում է օրենսգրքի կենտրոնական, առանցքային տեղը նորմատիվ ակտերի ընդհանուր համակարգում: Դրանով էլ օրենսգիրքը դառնում է իրավունքի համապատասխան ոլորտի գլխավոր աղբյուրը»¹: Իսկ պրոֆեսոր Յակովլևն ընդգծում է. «Ընդհանուր մասի նշանակությունը քաղաքացիական իրավունքում դժվար է գերազնահատել: Այն արտացոլում է ճյուղային կարգավորման առարկայի միատարրությունը, միավորող հենք է ծառայում ճյուղային բոլոր նորմերի համար՝ արտահայտելով նրանց իրավական բովանդակության ընդհանրությունը»²:

¹ Гражданское право. Т. 1, 2-ое издание, М., 1998, с. 64.

² Яковлев В.Ф., Общая часть гражданского права в современном законодательстве и юридической практике, Свердловск, 1978, с. 8.

Վերը շարադրվածից մնում է միայն արձանագրել, որ համակարգից զուրկ բազում սխալներ ու թերություններ պարունակող ՀՀ քաղ. օրը գրեթե չի իրականացնում քաղաքացիական իրավունքի հիմնական աղբյուրի դերակատարություն, և այդ սխալը մեր կարծիքով, կարող է շտկվել միայն նոր քաղաքացիանան օրենսգիրք ընդունելով:

Բ. Կարգավորման բացեր, սխալներ և հակասություններ: Տնտեսական իրողության ուսումնասիրությունը, ՀՀ քաղ. օր-ի վերլուծությունը և դրա համեմատությունը այլ երկրների նույն օրենսգրքերի հետ, ցույց են տալիս, որ նրանում շատ հարցեր իրենց լուծումը չեն ստացել կամ կարգավորվել են հակասություններով, սխալներով: Օրինակները շատ են և հանդիպում են տարատեսակ հարաբերություններ կարգավորող ինստիտուտներում:

Սկսենք քաղաքացիական իրավունքի սուբյեկտներից:

1. Տնտեսական հարաբերություններում լիարժեք մասնակցելու համար առաջնակարգ նշանակություն ունեն այդ հարաբերության սուբյեկտների շրջանակի օրենսդրական հստակ կանխորոշվածությունը և նրանց իրավասուբյեկտության կարգավորվածությունը: Այդ հանգամանքը չափազանց կարևոր է նաև ստվերային տնտեսության դեմ պայքարելու համար: Բայց մեր քաղաքացիական օրենսգրքում այդ խնդիրները պատշաճ ուշադրության չեն արժանացել, որի հետևանքով էլ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների հարցը ամբողջական լուծում չի ստացել: Դրա հետևանքով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ ճանաչված չեն, և համապատասխան կարգավիճակ վերապահված չէ գյուղացիական, ագարակային տնտեսություններին, Հայ առաքելական եկեղեցուն, այլ կրոնական կազմակերպությունների և օրենսդրորեն կարգավիճակ չունեցող այլ կազմավորումների:

Ըստ քաղ. օր.-ի՝ մարզերը քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններին մասնակցելու իրավունք չունեն, քանի որ քաղ. օր. 1-ն հողվածը իմպերատիվ սահմանում է քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակը և այդ հարաբերությունների մասնակից է ճանաչում ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետությանը և համայքներին: Այսինքն՝ վարչա-տարածքային կարևորագույն միավորը, որը ընդգրկում է մի քանի տասնյակ քաղաքային և գյուղական համայնքներ, լուծում է քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների իրավունք-

ներին վերաբերող բազում հարցեր, քաղաքաքացիական իրավունքի սուբյեկտ չհանդիսանալով՝ իրականացնում է օրենքով վերապահված «անօրինական» գործունեություն՝ իր գործողությունների համար չկրելով քաղաքացիաիրավական որևէ պատասխանատվություն:

Բանն այն է, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների հարցը կանոնակարգելիս օրենսգրքի հեղինակները ելել են այն պոստուլատից, որ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակից կարող են ճանաչվել միայն գույքի սեփականատերերը, բայց խճճվել են իրենց իսկ հյուսած սարդոստայնի մեջ և հետագա կարգավորումներով, առանց Քաղ. օր-ում փոփոխություն կատարելու, այլ իրավական ակտերով մարզերին, հիարկե անորոշ կարգավիճակով, վերապահել են քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության իրավունք: Ինչ վերաբերում է հանրային իրավունքի այլ սուբյեկտներին՝ նախարարություններ, գերատեսչություններ, ապա նրանք, ըստ օրենսգրքի, բոլոր հարաբերություններում պետք է հանդես գան պետության անունից, և նրանց գործողությունների համար պատասխանատվություն պետք է կրի Հայաստանի Հարապետությունը: Սակայն հետագայում, համոզվելով այդպիսի մոտեցման հակաբանական լինելու մեջ, առանց քաղ. օր.-ում փոփոխություն կատարելու, իրավաբանական անձի կարգավիճակ վերապահվեց ոչ թե նախարարություններին, գերատեսչություններին, այլ ընդհանրապես իրավունքի սուբյեկտ չհամարվող, նախարարությունների գերատեսչությունների աշխատակազմերին: Իրականում, եթե այլ հարցերի չանդրադառնանք, բյուջետային միջոցները տնօրինում է նախարարը, իսկ պատասխան է տալիս աշխատակազմի ղեկավարը:

Այլ կազմավորումների Քաղ. օր.-ը վերապահել է ամորֆ կարգավիճակ: Օրինակ՝ հիմնարկներին: Քաղ. օր. 62 հոդվածի համաձայն՝ հիմնարկը իրավաբանական անձ չէ և գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա: Այսինքն՝ հիմնարկները իրենց կարգավիճակով և պատասխանատվությամբ հավասարեցվել են մասնաճյուղերին և ներկայացուցչություններին, բայց պահպանել են իրենց առանձնահատուկ գործառույթները: Արդյունքում գույքային շրջանառությունը բախվեց անհասկանալի իրավիճակի հետ: Անհնար դարձավ ընկալել 1460 դպրոցների, մոտ երկու հազար գիտահետազոտական ինստիտուտների, գիտական

կազմակերպությունների, առողջապահական և միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգավիճակը: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ տարբեր օրենքներով կատարվեցին կանոնակարգման փորձեր, որը ի վերջո հանգեցրեց հիմնարկների շերտավորման՝ պետական որոշ հիմնարկների՝ ՊՈԱԿ-ների, վերապահվեց իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ մյուսները մնացին կախյալ ու անհասկանալի կարգավիճակով:

Չնայած այն բանին, որ ՀՀ Սահմանադրությունն առանձնահատուկ ընդգծում է հասարակական կյանքում կրոնի և Հայ առաքելական եկեղեցու առանձնահատուկ նշանակությունը, Քաղ. օրը ոչ այդ եկեղեցու և ոչ էլ այլ կրոնական կազմակերպությունների մասին, որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտների, չի հիշատակում և դրանց ու դրանց կազմում գործող կազմակերպությունների կարգավիճակը չի կանոնակարգում:

Արդեն նշեցինք, որ գյուղացիական (ագարակային) տնտեսությունների գոյության և գործունեության իրողության պարագայում քաղ.օր.-ը դրանց մասին անգամ չի հիշատակում, և միանգամայն բնական է, որ չի կարգավորում նաև գյուղացիական (ագարակային) տնտեսության անդամների ընդհանուր սեփականության հարցերը:

Քանի որ Քաղ. օրը գյուղացիական (ագարակային) տնտեսությունները չի համարում ոչ միայն քաղաքացիական, այլև գործարարական հարաբերությունների սուբյեկտ, ապա չի անդրադառնում նաև գյուղացիական (ագարակային) տնտեսությունների գույքային բազայի հիման վրա ստեղծվող տնտեսական ընկերակցության կամ կոոպերատիվի սեփականության ձևավորման կանոնակարգմանը:

Ի դեպ, կոոպերատիվների մասին: Հանրահայտ է, որ կոոպերատիվները լինում են արտադրական և սպառողական: Այդ բաժանումն ամրագրված է նաև քաղ. օր. 51 հոդվածում: Սակայն քաղ. օր. 117-121 հոդվածների հետ ծանոթությունը և սպառողական կոոպերատիվների իրավական վիճակը կարգավորող նորմերի բացակայությունը ցույց են տալիս, որ նշված բաժանումը ըստ էության ձևական է և օրենսդրական կարգավորում չի ստացել: Բացի դրանից, կոոպերատիվ հասկացությունը, իրավական կարգավիճակը, իրավասությունները այնպես են աղավաղված, որ, դրանցով ղեկավարվելով, դժվար թե հնարավոր լինի ստեղծել արտադրական կամ սպառողական կոոպերատիվ: Ասվածը հիմնավորելու համար ներկայացնեմ միայն 117 հոդվածը: Հոդվածի վերնագիրն է՝ «Հիմնական դրույթներ

կոոպերատիվների մասին»: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի՝ «Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»: Դժվար չէ նկատել, որ տրված է սպառողական՝ ոչ առևտրային կոոպերատիվի բնորոշումը, որը ոչ մի պարագայում կիրառելի չէ արտադրական՝ առևտրային կոոպերատիվների համար: Բայց նույն հոդվածի մյուս մասերը և մյուս հոդվածները վերաբերում են արտադրական կոոպերատիվին և հենց 117 հոդվածի 4-րդ մասում էլ ընդգծվում է, որ կոոպերատիվի առանձին տեսակների, մասնավորապես սպառողական կոոպերատիվների և համատիրությունների առանձնահատկությունները և իրավական կարգավիճակը, ինչպես նաև նրանց անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով: Չնայած դրան՝ քաղ. օր.-ում նման կարգավորում չկա: Այլ օրենքներ էլ մինչև օրս չեն ընդունվել: Ինչպես գիտեք, կոոպերատիվների, հատկապես գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը, հատուկ ընդգծվեց ՀՀ կառավարության կողմից ընդունված 2004-2007թ. «Գյուղատնտեսության կայուն զարգացման ստրատեգիայով»: Սահմանվեցին կոոպերացիայի մասին օրենքի ընդունման կոնկրետ ժամկետներ, բայց օրենսդիրը քաղ. օր.-ում տեղ գտած սխալներին այդպես էլ չանդրադարձավ:

Քաղ. օր.-ը այնպիսի անհասկանալի և ոչ օգտակար նորամուծություններ է կատարել տնտեսական ընկերակցությունների ստեղծման կարգը և իրավական կարգավիճակը սահմանող նորմերում, որոնք խաթարում են տնտեսական ընկերակցությունների ստեղծման և զարգացման բանական պայմանները: Մասնավորապես՝ քաղ. օր.-ը լիակատար պատասխանատվության ընկերակցությունների և վստահության վրա հիմնված ընկերակցությունների ստեղծման համար հիմնադրման պայմանագրի փոխարեն պահանջում է մշակել և ընդունել կանոնադրություն, բայց ունենալ ոչ թե «կանոնադրային», այլ «բաժնեհավաք կապիտալ»: Ինչն է այս նորամուծության պատճառը դժվար է հասկանալ: Բանն այն է, որ տնտեսական ընկերակցությունները, ի տարբերություն տնտեսական ընկերությունների, հիմնադիրների անձնական մասնակցությամբ գործող կազմակերպություններ են, կառավարման մարմիններ չեն ստեղծում, հիմնա-

դիրները իրենք են վարում կազմակերպության գերծունեությունը և պատասխանատվություն են կրում ցանկացած անդամի կնքած գործարքի համար: Այլ խոսքով՝ այդ կազմակերպությունների համար կարևոր նշանակություն ունի փոխադարձ վստահությունը, յուրաքանչյուրի անձնական պատասխանատվությունը, և դրա հավաստումն է բոլոր գործընկերների կողմից ստորագրված պայմանագիրը: Հետևաբար այդ կազմակերպության ստեղծման, գործունեության և գոյության համար հիմնադրման պայմանագիրն ունի առաջնակարգ նշանակություն: Այդ պատճառով էլ այլ երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, տնտեսական ընկերակցությունների հիմնադրման և գրանցման հիմք է հանդիսանում բոլոր գործընկերների ստորագրությամբ հաստատված պայմանագիրը (տե՛ս ԳԴՀ քաղ. օր. 193, 163 պարագրաֆներ): Ինչ վերաբերում է կազմակերպության կապիտալի անվանմանը, ապա այլ կերպ, քան իրավական նոստեսս անվանել, հնարավոր չէ: Որովհետև հանրահայտ է որ կազմակերպության կապիտալի անվանումը անխզելի կապ ունի հիմնադրման փաստաթղթի հետ: Եթե հիմնադրման փաստաթուղթը պայմանագիրն է կապիտալը կոչվում է «բաժնեհավաք», իսկ եթե հիմնադրման փաստաթուղթը կանոնադրությունն է՝ «կանոնադրային»: Այդ տերմինաբանությունը, որը գործում է դարերով, հայ իրավագետները չեն ստեղծել, հետևաբար փոփոխելու իրավունք չունեն, մանավանդ որ փոփոխությունը հիմքից զուրկ է: Բայց դա միակ աղավաղումը չէ: Ինչպես նշեցինք, ըստ ՀՀ քաղ.օր.-ի՝ տնտեսական ընկերակցության հիմնադրման փաստաթուղթը կանոնադրությունն է, և կանոնադրության հաստատումից հետո կազմակերպության անդամների միջև պայմանագրային հարաբերություններ առաջանալ չեն կարող: Այդ պատճառով էլ անհասկանալի է, թե ինչպիսի գործառույթ է իրականացնելու քաղ. օր.-ի՝ «ընկերակցության անդամների պատասխանատվությունը սահմանափակելու կամ պատասխանատվությունից ազատելու մասին համաձայնությունը անվավեր է» դրույթը: Եթե ասվածին էլ ավելացնենք, որ քաղ. օր.-ը հաշվի չառնելով, որ ընկերակցության գործընկերները լիակատար պատասխանատվություն են կրում իրենց ամբողջ զույքով, նրանց պարտավորեցնում է բաժնեհավաք կապիտալում ավանդը լրիվ ծավալով ներդնել մինչև ընկերության գրանցումը, ապա պարզ կդառնա, թե ինչու Հայաստանի Հանրապետությունում լիակատար պատասխանատվությամբ և վստահության վրա հիմնված ընկերակցություններ գրեթե չեն ստեղծվում:

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կարգավիճակի

կանոնակարգման հարցում ՀՀ քաղ. օր.-ում տեղ գտած թերությունների մասին պատկերացումը լիարժեք չի լինի, եթե չամդրադառնանք քաղ. օր. 2-րդ հոդվածում ձեռնարկատիրական գործունեության տրված հասկացությամբ: Ըստ այդ հոդվածի՝ «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց շահույթ ստանալն է»: Բաց է թողնված ընդամենը «պարբերաբար» բառը: Այդ բացթողումը շատ հանգիստ կարող է օգտագործվել մեկ անգամ իր տունը, իրերը կամ մեքենան շահավետ վաճառելու համար անձին ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու, նրա կնքած գործարքները անվավեր ճանաչելու և այլ նպատակներով: Եվ որպեսզի այդ սխալի հետևանքով առաջացող դատական քաշքշուկներից վերջ տրվի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը ստիպված էր իր 2007թ 3-1161(ՏԴ) նախադեպային որոշմամբ, ամտեսելով քաղաքական իրավական նորմերի մեկնաբանման վերաբերյալ քաղ. օր. 8-րդ հոդվածի իմպերատիվ պահանջը, մի քանի էջերի վրա պարզաբանել, թե ինչ հատկանիշներ բացահայտելուց հետո կարելի է որոշել՝ գործունեությունը ձեռնարկատիրական է, թե՞ ոչ, և ինչու քաղ. օր. 2-րդ հոդվածը կիրառելի չէ: Ընդ որում, նշենք, որ վճռաբեկ դատարանի այդ նախադեպային որոշումից հետո էլ թերությունը չի շտկվել:

2. Հայեցակարգային անճշտություններ և տնտեսական իրողության անտեսում:

Այն դեպքում, երբ քաղ. օր.-ը պարտատերերի պահանջները բավարարելու անընդունակ պարտապանների կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար սահմանվում է անհամաչափ բարձր պատասխանատվություն, այդ նույն օրենսգրքով որևէ հետևանք չի նախատեսվում սուբյեկտիվ այլ իրավունքներ խախտելու համար:

Չնայած մեր հանրապետության համար հողերի արդյունավետ օգտագործման հսկայական նշանակությանը՝ ՀՀ քաղ. օր.-ը չի նախատեսում որևէ հետևանք հողերը նպատակային նշանակությամբ չօգտագործող, անարդյունավետ օգտագործող, հողօգտագործման իրավունքը չարաշահող սեփականատերերի և հողօգտագործողների համար: Այլ խոսքով՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի չարաշահման և հողային օրենսդրության խախտման համար քաղա-

քացիաիրավական որևէ հետևանք և պատասխանատվություն նախատեսված չէ:

Սանկցիաներ նախատեսված չեն նաև ինքնական շինարարություն իրականացնող անձանց համար: Ավելին, քաղ. օր. 188 հոդվածը սահմանում է. «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է կառուցել, իսկ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված ինքնական կառույցի նկատմամբ՝ հողամասի սեփականատեր քաղաքացու սեփականության իրավունքը»: Այլ խոսքով՝ քաղ. օր.-ը խրախուսում է սեփականատերերին, որ նրանք ոչ միայն աչք փակեն, այլև հնարավորինս օժանդակեն ինքնական կառույցների իրականացմանը: Իր հողամասում ինքնական կառուցապատումը չարգելած սեփականատերը չի տուժում անգամ ինքնական կառույցի քանդման դեպքում: Քաղ. օր. 188 հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ուրիշի հողամասում ինքնական կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ ինքնական կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը»: Ավելին, նույն հոդվածը, որպես խրախուսման միջոց, նախատեսում է, որ ինքնական կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն հողամասի սեփականատիրոջ դիմումով: Այդ հոդվածը աչքի է ընկնում ևս մեկ նորամուծությամբ՝ այն քաղաքացիական իրավունք է ներմուծել մասնավոր իրավունքին խորթ վարչական կարգավորում: Հոդվածը քաղաքացիաիրավական վեճի լուծումը՝ մասնավոր անձանց անօրինական գործողություններով հանրային շահերի խախտումն օրինականացնելու իրավունքը, վերապահել է հենց այն սուբյեկտներին, որոնց պարտականությունն է ինքնական կառուցապատումներն արգելելը: Մասնավորապես նույն հոդվածը նախատեսում է, որ ինքնական կառույցները համայնքների ղեկավարների, համայնքների վարչական տարածքներից դուրս մարզպետների կողմից կարող են ճանաչվել օրինական՝ կառավարության սահմանված կարգով: Նման նորմի առկայության պարագայում մի՞թե կարելի է զարմանալ, որ պետությանը պատկանող հողամասերի վրա՝ Երևան քաղաքի շուրջը, առաջանում են ինքնական կառուցված ավաններ:

Ժամանակակից իրավական համակարգերի զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը մարդու և քաղաքացու իրա-

վունքների և ազատությունների ամրապնդումը և պաշտպանությունն է: Այդ իրավունքների մեջ նշանակալից տեղ են զբաղեցնում անձնական ոչ զույքային իրավունքները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը մարդու արժանապատվությունը համարում է մարդու իրավունքների ու ազատությունների հիմք: Արգելում է առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել տեղեկություններ՝ բացառությամբ օրենքով նախատեսվածներից: Սահմանադրությունը հատուկ ընդգծում է, որ մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Մարդու նշված անկապտելի իրավունքը և Սահմանադրությամբ նրա պաշտպանության առանձնահատուկ ամրագրումը նշանակում են, որ դրանց իրականացումն ու պաշտպանությունը համապատասխան ճյուղային նորմատիվ իրավական ակտերում իր կանոնակարգումն ու կոնկրետացումը Սահմանադրության ոգուն և պահանջներին համապատասխան և ոչ մի մարմին Սահմանադրության պահանջները շրջանցելու, սահմանադրությամբ վերապահված իրավունքները սահմանափակելու իրավասություն չունի:

Մինչդեռ քաղաքացիական օրենսգրքի նորմերի վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ մարդու պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության սահմանադրական իրավունքը ոչ միայն սահմանափակվել է, այլև որոշակի դեպքերում, ըստ էության, զրկվել է պաշտպանելու հնարավորությունից: Մինչև 2010թ մայիսի 18-ին քաղ. օր-ում կատարված փոփոխությունները, կարելի է ասել, որ քաղ. օր.-ով նախատեսված և ոչնչով չերաշխավորված պաշտպանության միակ միջոցը դատարանով պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող տեղեկությունների հերքում պահանջելն էր, ապա փոփոխություններից հետո այդ միջոցից օգտվելու հնարավորությունն ավելի սահմանափակվեց, քանի որ այդ միջոցից ներկայումս կարելի է օգտվել միայն իրապարակային վիրավորանքի և զրպարտության դեպքում: Քաղ. օր. 19 հոդվածի հին և նոր խմբագրությունների համեմատությունն ակնհայտ ցույց է տալիս, որ նոր խմբագրությամբ անհարկի սահմանափակվել են անձի՝ իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու հնարավորությունները: Իսկ քաղ. օր. 1087.1. և քր. օր. 135, 136 հոդվածների համեմատությունից պարզվում է, որ աղճատվել են վիրավորանքի և զրպարտության հասկացությունները: Մասնավորա-

պես, եթե քաղ. օր. 19 հոդվածի նախկին խմբագրությամբ քաղաքացին իրավունք ուներ դատարանով պահանջելու հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավն արատավորող տեղեկությունները (ցանկացած տեղեկություն – Տ.Բ.), եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցեր, որ դրանք համապատասխանում են իրականությանը, ապա նոր խմբագրությամբ նման իրավունք նա ձեռք է բերում միայն **մինչև փոփոխությունների կատարումը հանցագործություն համարվող** վիրավորանքի և զրպարտության դեպքում: Ստացվում է, որ եթե մարդու երեսին թքել (հազար ներողություն), և նրան ապտակել են իր տան մեջ՝ սեփական երեխայի ներկայությամբ, նա իր արժանապատվությունը օրենքով պաշտպանել չի կարող: Կա՛մ պետք է դիմի «վեներետայի», կա՛մ, եթե ի վիճակի չէ, ամբողջ կյանքը ապրի պատվազրկված: Պապվազրկողն էլ կարող է ծանոթներին և անծանոթներին, անգամ հրապարակայնորեն հանգիստ տեղեկացնել իր «քաջագործության» մասին: Վերջինս վիրավորանք չի համարվի, քանի որ հիմնված է ստույգ փաստի վրա (քաղ. օր. 1087.1. հոդվ.):

Ավաճող միակ թերությունը չէ: Ինչպես վերը նշեցինք, կատարված փոփոխություններով աղավաղվել են իրավագիտության հանրագիտարանային՝ դասական հասկացությունները: Մասնավորապես՝ նոր խմբագրությամբ (քաղ. օր. 1087.1 հոդվ. կետ 2) **քաղաքացիական օրենսգրքի իմաստով** վիրավորանք է համարվում խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարած հրապարակային **արտահայտությունը**:

Նախ՝ մեզ համար անհասկանալի է, թե ինչպես կարող է նույն արարքը տարբեր օրենսգրքերում տարբեր բովանդակություն ունենալ:

Երկրորդ՝ վիրավորանքը վիրավորանք է, այն ունի նույն բնույթն ու բովանդակությունը՝ անկախ նրանից, թե որ օրենսգրքում կասեմանվի նրա հասկացությունը: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 136 հոդվածում ամրագրված հասկացությունը փոփոխելու և վիրավորանքի էությունը աղճատելու անհրաժեշտությունը չկար:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 136 հոդվածի համաձայն վիրավորանք էր համարվում *ուրիշի պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորացնելը*: Ակներև է, որ «արատավորելու նպատակով կատար-

ված հրապարակային արտահայտությունը» և «անպարկեշտ ձևով ստորագցնելը» համարժեք արարքներ չեն: Բացի դրանից, քրեական օրենսգրքում ձևակերպված հասկացությունից ակնհայտ բխում է, որ արարքը վիրավորանք ճանաչելու համար դրսևորման հրապարակայնությունը և արարքի կատարման եղանակը որևէ նշանակություն չունեն: Այն կարող է կատարվել ինչպես անձի ներկայությամբ, այնպես էլ բացակայությամբ, ինչպես հրապարակայնորեն, այնպես էլ բանբասանքներով: Կարող է դրսևորվել ինչպես անձի նկատմամբ վիրավորական արտահայտություններ թույլ տալու, այնպես էլ նույն բնույթի գործողություններ կատարելու միջոցով¹: Այսինքն՝ քաղ. օր. 1087.1. հոդվածը ոչ միայն աղճատել է վիրավորանքի հասկացությունը, այլև անհարկի սահմանափակել է դրա դրսևորման և՛ ձևը, և՛ եղանակը: Արդյունքում ստացվում է հետևյալը. քաղ. օր-ում փոփոխություններ կատարելուց հետո (քանի որ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 136 հոդվածը) գույքային պատասխանատվության չենթարկվելու համար կարելի է զերծ մնալ հրապարակային արտահայտություններով անձին վիրավորելուց, բայց առանց պատասխանատվության ենթարկվելու վախի՝ անձին վիրավորել ոչ հրապարակայնորեն կամ հրապարակայնորեն կատարվող գործողություններով (անպարկեշտ ժեստերով, տուժողի երեսին թքելով, նրա հագուստը ցեխոտելով և այլն)²:

Նույնն է կատարվել նաև զրպարտության դեպքում: Ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նսենացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը (Քր. օր. 135 հոդված), քաղաքացիական օրենսգրքի իմաստով դարձել է «անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելը, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

Պարզապես անհասկանալի է, թե ինչու են «ակնհայտ սուտ տեղեկությունները» փոխարինվել «փաստացի տվյալներով», ինչու է ՀՀ օրենսգրքում «փաստացի տվյալներ» բառակապակցությունը պար-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով. /Եր.: ԵՊՀ հրատ., 2009 էջ 233, Энциклопедический юридический словарь.- М.: ИНФРА –М, 1996 էջ 205:

² Տե՛ս Քրեական իրավունքի նշված դասագիրքը, էջ 234:

զարանվում անգլալրեն (statement of fact) - ով, ինչու է Սահմանադրությամբ ամրագրված «տարածել» բառը փոխարինվել «հիապարակային ներկայացնել» բառակապակցությամբ, ինչպես հասկանալ՝ «հիապարակային ներկայացման» բնորոշմամբ՝ գրություններ բաժանելը, տարբեր մարդկանց առանձին - առանձին հայտնելը՝ ներկայացնել է, թե՞ տարածել: Մի խոսքով, կատարված փոփոխությունները շատ հեռու են արժանապատվության համակողմանի պաշտպանությունը և բարոյական վնասի հատուցման ինստիտուտին վերապահված առաքելության իրականացումն ապահովելուց:

Մեր կարծիքով, այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է, առանց քաղ. օր. 19 հոդվածի բովանդակությունը փոփոխելու օրենսգիրքը լրացնել անձնական ոչ գույքային իրավունքների խախտմամբ պատճառված բարոյական վնասի հատուցման կիրառումն ապահովող արարողակարգեր նախատեսող նորմերով, որով վիրավորանքի և զրպարտության դեպքում կլուծվեր նաև բարոյական վնասի հատուցման հարցը: Այդպիսի նորմերի ներմուծումը քաղաքացիական օրենսգիրք անհրաժեշտ է թեկուզև այն պատճառով, որ բարոյական վնասի հատուցման հնարավորությունը քաղաքացիական հասարակության անդամների առավել պաշտպանվածության չափանիշն է:

3. 33 քաղ. օրը պարունակում է նաև ոչ միայն սխալ, այլև անիմաստ նորմեր: Օրինակ՝ քաղ. օր. 26 հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից»: Նորմը սխալ է, որովհետև ստեղծվելու պահից տնտեսական ընկերությունն է իրավունքի սուբյեկտ, իսկ ստեղծողը ընկերության անվան տակ գործարարությաբ կամ, ինչպես օրենսգրքում է նշված, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել չի կարող: Նորմն անիմաստ է, որովհետև նույն օրենսգիրքը ոչ միայն տնտեսական ընկերությունների, այլև այլ իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը կանոնակարգելիս սահմանում է, թե ովքեր կարող են լինել դրանց հիմնադիրները, մասնակիցները և ինչպիսի իրավունքներից են օգտվում: Այդ նորմի փոխարեն, ինչպես հուշում է երկրորդ կետը, պետք է նախատեսված լիներ. «Քաղաքացին կարող է որպես գործարար զբաղվել գործարարական գործունեությամբ պետական գրանցման պահից»:

Կամ՝ քաղ. օր. 71 հոդվածը թերի է, որովհետև նրա առաջին մասը սահմանում է սնանկ ճանաչելու հիմքերից միայն մեկը՝ պարտա-

տերերի պահանջները բավարարելու անկարողությունը: Այդ մասն անհիմաստ է, որովհետև երկրորդ մասը սահմանում է, որ իրավաբանական անձի սնանկ ճանաչելու հիմքերի կարգը, ինչպես նաև սնանկ ճանաչված իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Նշանանում է՝ առաջին մասում անհրաժեշտ էր նշել, որ իրավաբանական անձը կարող է սնանկ ճանաչվել միայն դատարանի վճռով: Իսկ եթե օրենսդիրը ցանկանում էր օրենսգրքում թվարկել սնանկության հիմքերը, ապա պետք է թվարկեր թե՛ հարկադիր, թե՛ կամավոր սնանկության հիմքերը:

Քաղ. օր. 163 հոդվածի 1-ին կետի 2-րդ մաս՝ «Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է»: Ոչինչ չբացատրող տափակաբանություն է (տավտալոգիա): Պետք է լիներ՝ *տիրապետման իրավունքը գույքը իր իրավասության տիրույթում և տնտեսությունում պահելու, նրա նկատմամբ իրավունքներ իրականացնելու իրավագործությունն է:*

Քաղ. օր. 298 հոդվածի 3-րդ կետ. «Արտաքին տնտեսական գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության»:

Հայրենական իրավակարգում կիրառվել է արտաքին առևտրի պետական մենաշնորհի պայմաններում և արտացոլում էր պետության առանձնահատուկ վերաբերմունքը իր կնքած գործարքների նկատմամբ: Ներկայումս նման մոտեցումը արդարացված և իրատեսական չէ. արտաքին տնտեսական գործարքներ կնքողները իրենց օտարերկրյա գործընկերների համեմտությամբ հայտնվում են անհավասար պայմաններում:

Քաղ. օր. 1230 հոդվածի 5-րդ կետը (ժառանգին ժառանգության հասանելիք մասից հրաժարվել չի թույլատրվում) սխալ ձևակերպման հետևանքով հակասում է 1-ին կետին: Պետք է լիներ՝ «ժառանգին իրեն հասանելիք ժառանգության մի մասից հրաժարվել չի թույլատրվում»:

Օրենսգրքում օրենքներով կատարված փոփոխություններից հետո պահպանվում են հին ձևակերպումները: Օրինակ՝ «Սամանափակ ընկերությունների մասին» օրենքը սահմանում է, որ նման կազմակերպարավական ձև ունեցող ընկերությունը կարող է ստեղծվել առանց կանոնադրային կապիտալի, իսկ քաղ. օր. 104 հոդվածում դեռևս պահպանվում են. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն-

Որպես դրսև եկած մասնակցին վճարվում է կանոնադրային կապիտալում նրա բաժնեմասին համապատասխանող գույքի արժեքը ... »:

Նման անհիմաստ նորմերի թվարկումը կարելի է երկար շարունակել, բայց խոսենք այլ թերությունների մասին:

Եզրութաբանական անճշտություններ և հակասություններ:

Ճիշտ տերմինաբանությունը իրավակիրառ գործունեության դյուրինության ապահովման և իրավագիտակցության զարգացման գրավականն է: Ավանդական դարձած տերմինների պահպանումը ոչ միայն հարգանքի տուրք է պատմություն ունեցող իրավական անցյալին, այլև հեշտացնում է պատմական փորձի ուսումնասիրությունը: Մեր հանրապետության Քաղ. օրը. եզրույթների կամայական օգտագործման առումով քննադատության չի դիմանում: Օրենսգիրքը մշակողները, առաջնորդվելով «ջնջենք նորից սկսենք» սկզբունքով, աղավաղել են քաղաքացիությունը նվաճած, մարդկանց իրավագիտակցության մեջ ամրապնդված ավանդական տերմինները, օգտագործել են նոր՝ երևույթի էությունը չարտացոլող տերմիններ, չեն խուսափել նույն տերմինը կամայական, տարբեր նշանակություններով օգտագործելուց: Հարց է առաջանում՝ ինչ կարիք կար Մխիթար Գոշի դատաստանագրքից էլ առաջ օգտագործվող «առուծախը» դարձնել «առուվաճառք»: Եթե շատ էին ուզում դարձնել գրական հայերեն, ապա գոնե դարձնեին «գնում և վաճառք»: Այս կապակցությամբ արժե հիշեցնել հանճարեղ Թումանյանի խոսքերը. «Բարբառը մեր լեզվի հարստությունն է, ուստիև պետք է լավ վերաբերվել նրանց՝ առանց թույլ տալու, որ նրանք հախուռն ու անկոչ միջամտություններով խաթարեն գրական հայերենը»:

Եթե **առուծախի** անհաջող փոփոխությունը կարծեք թե պայմանավորված էր գրական հայերեն դարձնելու միտումով, ապա անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված «կանխավճարը» «նախավճար» դարձնելը և **նախավճար** տերմինի բազմանշանակ օգտագործումը (տե՛ս Քաղ. օր. 36,37,891 և այլն), ինչ նպատակ էին հետապնդում, երբ «առգրավում»-ը փոխարինում էին «ռեկվիզիցիա»-ով, «աճուրդ»-ը՝ «սակարկություններ»-ով, «վերակառուցում»-ը՝ «վերակազմակերպում»-ով, «ոչ պատշաճ»-ը՝ «անպատշաճ»-ով: Ինչի՞ համար 29 հոդվածի «փոքրահասակը» 598 հոդվածում դարձավ «մանկահասակ»: Ինչո՞ւ են քաղ.օր. 47 գլխում կամայականորեն մի հոդվածում օգտագործում «փոխառու», հաջորդում՝ «վարկառու», ի՞նչ հիմքով են գտնում, որ գույքը դատավճռով *անհատույց առգրավելը* «բռնագրավում» է, հարց է առաջանում՝ իսկ վճռով *հատուցմամբ*

կամ անհատույց «առգրավել» ինչ է: Մի՞թե կարելի էր «մահացած հայտարարելու» փոխարեն օգտագործել «մահացած ճանաչել» բառակապակցությունը. հանրահայտ է, որ ճանաչել կարելի է դիակը, իսկ դիակի բացակայության պարագայում «ճանաչել» բառն օգտագործել չի կարելի:

Այսպիսի թյուրիմացությունների շարքը կարելի է երկար շարունակել: Բայց ցավալին միայն սա չէ, այլ այն, որ քաղ. օր.-ի խեղաթյուրված տերմինաբանությունը մեխանիկորեն տեղ է գտնում նաև իրավական այլ ակտերում: Օրինակ՝ այլ օրենսդրական ակտեր մշակողները քաղ.օր.-ի տերմիններն օգտագործելիս ինչո՞ւ իրենց հարց չեն տալիս՝ ինչու քաղ. օր.-ը «գործարար» տերմինի փոխարեն շրջանառության մեջ մտցրեց «ձեռնարկատեր», «գործարարական գործունեության» փոխարեն՝ «ձեռնարկատիրական գործունեություն» հիմքից սխալ եզրույթները, ինչու են քաղ. օր.-ից անհետացել «ձեռնարկություն», «իր», «իրային իրավունքներ», և այլ տերմիններ ու հասկացություններ: Ընդ որում, հարկ ենք համարում ընդգծել, որ օրենսգրքի ամբողջ տրամաբանությունը հենվում է իրային և գույքային հարաբերությունների սահմանազատման վրա: «Իր» և «իրային» հասկացությունների օգնությամբ ենք միմյանցից սահմանազատում և կանոնակարգում գույքային հարաբերություններ կարգավորող երկու տարբեր՝ սեփականության և պարտավորության ինստիտուտները: Բայց խոսքն այստեղ միայն տերմինի մասին չէ, այլ դրա՝ ավանդաբար հին հռոմեական իրավունքից բոլոր իրավական համակարգերի կողմից փոխառված հասկացությունների չօգտագործման հետևանքով առաջացող արհեստական հակասությունների և խոչընդոտների, իրավական տարբեր ինստիտուտները հավուր պատշաճի վերլուծելու և իրավական նորմերի մեկնաբանման համար ստեղծված բարդությունների մասին:

Այլ բնույթի սխալներ: ՀՀ քաղ. օր.-ը աչքի է ընկնում լեզվական անճշտություններով, սխալ շարադրանքի, կետադրության, վրիպակների կամ բառեր բաց թողնելու հետևանքով նորմի իմաստի աղավաղմամբ, ինչի արդյունքում նորմերը դառնում են չկիրառվող, կամ առաջանում են կիրառման բարդություններ: Վերը արդեն նշեցինք քաղ. օր. 2 հոդվածում «պարբերաբար» բառը բաց թողնելու հետևանքով առաջացած բարդությունների մասին: Բերենք ևս մեկ օրինակ՝ քաղ. օր. 24 հոդվածի 3-րդ մասում շարադրված է. «Ամուսնությունն անվավեր ճանաչելիս՝ դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու

գործունակության լրիվ սահմանափակման մասին»: Քանի որ այդ նորմում «լրիվ» բառը դրվել է «գործունակություն» բառից հետո, ստացվում է, որ «լրիվ գործունակությունը» սահմանափակելու փոխարեն դատարանին իրավունք է վերապահվել 17 տարեկան քաղաքացուն ճանաչել անգործունակ: Երևի բարեբախտությունը այն է, որ այդ նորմի կիրառման իրավունքը վերապահված է դատարանին, և նման գործեր սակավ են հանդիպում, այլապես նորմի կիրառման արդյունքում կունենայինք անցանկալի հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի սխալների և թերությունների մասին կարելի է խոսել շատ երկար, բավարարվեմ միայն նշելով, որ Բեռնի համալսարանի պրոֆեսոր Ռոլֆ Կնիպերը դեռևս 2004թ. առաջարկում էր իր իսկ գովաբանած օրենսգրքում բացի այն թերություններից, որոնք նշվեցին մեր կողմից, օրենսգրքում կատարել 250-ից ավելի փոփոխություն, որոնց մեծը չենք անդրադառնում:

Ավագից հետո մնում է ավելացնել թերի կարգավորված և հանիրավի բացակայող մի քանի ինստիտուտների անվանումները՝ «Ընդհանուր դրույթներ իրային իրավունքների մասին», «Տիրապետողական պաշտպանություն», «Օպերատիվ կառավարման իրավունք», «Կորպորատիվ հարաբերություններ», «Աձնական (անհատական) օգտագործման իրավունք կամ լատիներեն (ուզուֆ-ռուկտ)», «Փոխադրումներ», «Արժեթղթեր», «Կոնտրակտացիա», «Կոնցեսիա», «Ձեռնարկության առուժախ», «Ձեռնարկության վարձակալություն», «Էլեկտրոնային առևտուր» և այլն:

Համոզված ենք, որ համակարգից զուրկ, տարընթերցման ու տարբեր մեկնաբանությունների հնարավորություն ընձեռող, բազում սխալներ, թերություններ, հակասություններ պարունակող օրենսգրքի գիտականորեն հիմնավորված, համակարգված բարեփոխումը կենսական անհրաժեշտություն է: Ընդ որում, մեր խորին համոզմամբ՝ գործող օրենսգրքի սխալները բացթողումները և մյուս թերությունները հնարավոր է վերացնել՝ միայն քաղաքացիական նոր օրենսգիրք մշակելով: Գտնում ենք, որ գիտնականների և պրակտիկ աշխատողների կողմից արված առաջարկների հաշվառմամբ՝ քաղաքացիական նոր օրենսգրքի մշակումը դրա կարգավորիչ դերի բարձրացման և դրանով իսկ շուկայական հարաբերությունների մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի ապահովման լավագույն եղանակն է:

Tariel Barseghyan

Head of the YSU Chair of Civil Law, Doctor Legal Sciences, Professor

CURRENT STATE OF THE CIVIL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA AND PROSPECTIVES OF ITS IMPROVEMENT

The natural development of market relations is possible only due to the existence of an appropriate legislative basis. The Civil Code of the RA, being regarded as a legislative base of regulating property relations, plays a key role in legislation drafting process. However, the Civil Code fails to carry out its mission because of numerous shortcomings, mistakes, incorrect formulations and omissions. In this respect the Civil Code amendment, otherwise stated, new code elaboration is a necessity.

It is essential to draft a new Civil Code since the effective code is one of those unique and so called “systematized acts” which corresponds neither to institutional nor to pandect systematization.

The Civil Code does not comprise a General Part, no consistency is observed in institution allocation. The issues of some subjects’ participation (marz, farm, co-operative society, etc) in civil legal relationships are not regulated. Almost the same refers to the co-responsibility application for torts. The institution of moral damage compensation is lacking, as well. “House alienation on lifelong care condition”, “contracting” and other agreements are not considered, technical terms of civil law have been distorted. The latter hinders strengthening of sense of justice.

The researches show that the Civil Code needs a radical change since it is devoid of a system; in addition there are various mistakes and more than 150 shortcomings, contradictions, and omissions.

Consequently, based on the suggestions of both scientists and professionals it is necessary to draft a new Civil Code that will provide complete protection of the legal interests of those who participate in civil legal relationships.